ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 111 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 4-Ի N 520-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի և 34-րդ հոդվածի 1-ին մասի և հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերը՝

1. Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2025 թվականի օգոստոսի 4-ի «Արբեիտեռ-սամարիտեռ-բունդ Դոյչլանդ Ի Վի (ԷյէսԲի)»-ի մասնաճյուղ» առանձնացված ստորաբաժանման կողմից իրականացվող «Աջակցություն Հայաստանյան արագ արձագանքման բժշկական թիմին» ծրագրի մասին» N 520-Ա որոշման 1-ին կետում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) «6,963,934» թիվը փոխարինել «10,150,413.27» թվով.

2) հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ «Արբեիտեռ-սամարիտեռ-բունդ Դոյչլանդ Ի Վի (ԷյէսԲի)»-ի մասնաճյուղ» առանձնացված ստորաբաժանման կողմից (ՀՎՀՀ՝ 02870545) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Վեգա ուորլդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 02704414) 2026 թվականի փետրվարի 4-ին կնքված՝ N 02/1/2026/ARM պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սառեցման և ջեռուցման համակարգով շարժական օդորակչի ձեռքբերում՝ 1,950,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Օֆիս պրո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 00861435) 2026 թվականի փետրվարի 9-ին կնքված՝ N 02/2/2026/ARM պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է գրասենյակային պարագաների և պիտույքների ձեռքբերում՝ 286,360 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Դոմուս» փակ բաժնետիրական ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 02842758) 2026 թվականի փետրվարի 9-ին կնքված՝ N 02/3/2026/ARM պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ծալվող աթոռների, նստարանների և փոքր սառնարանների ձեռքբերում՝ 950,120 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

04.03.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ